Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
փետրվարի 19-ի N 165 - Ն որոշման

Կ Ա Զ Մ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Հայաստանի Հանրապետության վարչապետ (խորհրդի նախագահ)

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ (համաձայնությամբ)

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակ-ցություններից մեկական ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Հանրային խորհրդի նախագահ (համաձայնությամբ)

Հայաստանի համայնքների միության մեկ ներկայացուցիչ (համաձայնությամբ)

Քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցիչ (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թվականի
փետրվարի 19-ի N 165 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԽՈՐՀՐԴԻ, ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով կարգավորվում են խորհրդի, հանձնախմբի և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության հետ կապված հարաբերությունները:

II. ԽՈՐՀՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.Խորհուրդը՝

1) քննարկում և հավանություն է տալիս հակակոռուպցիոն ռազմավարությանը.

2) ներկայացնում է առաջարկություն հակակոռուպցիոն ռազմավարությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ.

3) քննարկում և հավանություն է տալիս հակակոռուպցիոն ռազմավարության հիման վրա մշակված ոլորտային ծրագրերին.

4) ներկայացնում է առաջարկություն հակակոռուպցիոն ռազմավարության հիման վրա մշակված ոլորտային ծրագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ.

5) համակարգում է հակակոռուպցիոն ռազմավարությունից և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող միջոցառումների իրականացումը, ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և

իրականացման գործընթացը՝ պետական մարմիններից պահանջելով և ստանալով անհրաժեշտ նյութեր ու տեղեկատվություն, կազմակերպելով և անցկացնելով հանդիպումներ, քննարկումներ, լսումներ, քննարկելով կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առկա խնդիրները և առաջարկելով դրանց լուծման հնարավոր տարբերակներ.

6) հսկողություն է իրականացնում հակակոռուպցիոն ռազմավարությունից և Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող միջոցառումների կատարման, ոլորտային հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացի նկատմամբ՝ ներկայացնելով առաջարկություններ պատասխանատու մարմիններին, պահանջելով հաշվետվություններ և վերլուծություններ, կազմակերպելով ու անցկացնելով քննարկումներ, հանդիպումներ, լսումներ.

7) քննարկում է հակակոռուպցիոն ծրագրերի գնահատման(մոնիթորինգի) արդյունքները և հանձնախմբի կողմից ամփոփված հաշվետվությունների հիման վրա առաջարկություններ ներկայացնում պատասխանատու մարմիններին.

8) կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում համագործակցում է միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, գործարար ոլորտը ներկայացնող կազմակերպությունների, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում դերակատարում ունեցող մարմինների, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող ինստիտուտների հետ, այդ թվում՝ համակարգված հանդիպումների միջոցով: Ընդ որում, համակարգված հանդիպումների ժամանակ քննարկումներ են տեղի ունենում իրականացված միջոցառումների, խնդիրների, հնարավոր լուծումների վերաբերյալ՝ միաժամանակ ապահովելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև պատշաճ հաղորդակցություն և արդյունավետ համագործակցություն: Քննարկումների արդյունքում ներկայացված կարծիքները խորհուրդը կարող է ներառել իր նախապատրաստած առաջարկությունների մեջ.

9) հաստատում է խորհրդի աշխատակարգը.

10) հաստատում է հանձնախմբի աշխատակարգը.

11) սահմանում է փորձագետների ընտրության կարգը, ինչպես նաև վերջիններիս ներկայացվող չափանիշները:

3. Խորհրդի՝ հանձնախմբի կողմից ամփոփված հաշվետվությունների հիման վրա պատասխանատու մարմիններին ներկայացրած առաջարկությունները կենսագործվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի կամ պատասխանատու մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերով: Խորհրդի առաջարկությունները կարող են հիմք ծառայել նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի համար:

III. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Խորհրդի նախագահը և անդամները խորհրդի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

5. Խորհրդի գործունեությունը հիմնված է օրինականության, թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների վրա:

6. Խորհրդի կազմում մրցութային հիմունքներով ներգրավվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների (այսուհետ՝ հասարակական կազմակերպություններ)՝ նկատմամբ կիրառվում է ռոտացիայի սկզբունքը: Հասարակական կազմակերպությունների մրցույթի և ռոտացիայի կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

7. Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել այն հասարակական կազմակերպությունները, որոնք՝

1) ունեն հակակոռուպցիոն ոլորտի առնվազն վերջին հինգ տարվա գործունեության փորձ.

2) որոնց կանոնադրության մեջ կոռուպցիայի դեմ պայքարը նշված է որպես գործունեության ուղղություն.

3) ունեն հակակոռուպցիոն ոլորտի առնվազն վերջին հինգ տարվա համագործակցության փորձ միջազգային կազմակերպությունների հետ.

4) կներկայացնեն միջազգային կառույցների հետ և (կամ) սեփական նախաձեռնությամբ նշված ոլորտին վերաբերող իրականացրած առնվազն 5 ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն.

5) կներկայացնեն միջազգային կառույցների հետ իրականացված ծրագրերի արդյունավետության վերաբերյալ գործընկեր կազմակերպության կողմից տրված երաշխավորագիր:

8. Խորհրդի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Խորհրդի յուրաքանչյուր նիստի ավարտից հետո տասնօրյա ժամկետում նիստի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքէջում:

9. Խորհրդի նիստերը գումարվում են խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ:

10. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե ներկա են խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի նիստերի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են նիստը նախագահողը և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի պետը:

11. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի

նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե խորհրդի որևէ անդամ խորհրդի ընդունած որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա այն գրավոր կցվում է խորհրդի որոշմանը, և դրա մասին գրառում է կատարվում խորհրդի նիստի արձանագրության մեջ:

12. Խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքը.

2) խորհրդի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում.

3) Հայաստանի Հանրապետության Նախագահին է ներկայացնում խորհրդի գործունեության, այդ թվում՝ համակարգված հանդիպումների արդյունքների, ձեռնարկված քայլերի և ստացված արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն.

4) հրավիրում և վարում է խորհրդի նիստերը կամ նիստերի վարումը հանձնարարում է խորհրդի անդամներից որևէ մեկին.

5) առաջադրում է օրակարգը, որը քննարկվելիք այլ հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերով խորհրդի անդամներին է հանձնվում ոչ ուշ, քան նիստից երեք օր առաջ:

13. Խորհրդի անդամը՝

1) մասնակցում է խորհրդի նիստերին.

2) ներկայացնում է առաջարկություն խորհրդի օրակարգում ներառվելիք հարցերի, հակակոռուպցիոն ռազմավարության և դրա հիման վրա մշակված ոլորտային ծրագրերի, ինչպես նաև խորհրդի կողմից քննարկվող այլ հարցերի վերաբերյալ.

3) իրականացնում է խորհրդի որոշումներից և սույն կարգով սահմանված խորհրդի լիազորություններից բխող այլ գործառույթներ:

14. Խորհրդի նիստին մասնակցելու անհնարինության դեպքում խորհրդի անդամը տեղեկացնում է խորհրդի նախագահին: Խորհրդի անդամի՝ խորհրդի աշխատանքներին մասնակցելու անհնարինության կամ մեկ տարվա ընթացքում խորհրդի նիստերի ավելի քան կեսից անհարգելի բացակայելու դեպքում վերջինիս փոխարինման հարցը խորհրդի

նախագահը ներկայացնում է խորհրդի քննարկմանը: Խորհրդի համապատասխան որոշման առկայության դեպքում խորհրդի նախագահը դիմում է խորհրդի տվյալ անդամին առաջադրած կամ խորհրդի տվյալ անդամին նշանակելու իրավասություն ունեցող մարմնին՝ հարցին լուծում տալու, անհրաժեշտության դեպքում տվյալ անձին փոխարինելու հարցը լուծելու համար, կամ սահմանված կարգով նախաձեռնում է մրցույթ:

15. Խորհրդի հրավերով խորհրդի նիստին կարող են մասնակցել քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև այլ անձինք:

16. Խորհուրդն ապահովում է իր աշխատանքների լուսաբանումը:

IV. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

17. Հանձնախումբը՝

1) աջակցում է հակակոռուպցիոն ռազմավարության և հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի նախագծերի մշակմանը, առաջարկություններ է ներկայացնում խորհրդին ռազմավարությունում և (կամ) հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ.

2) իրականացնում է ծրագրերի մոնիթորինգ, գնահատում, ամփոփում է ծրագրերի իրականացման մասին հաշվետվությունները.

3) նախապատրաստում է հաշվետվություններ, զեկույցներ ծրագրերի կատարման վիճակի մասին և առաջարկություններ ներկայացնում խորհրդին.

4) խորհրդի կողմից նախանշված, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված ոլորտներում իրականացնում է կոռուպցիայի դրսևորումների և պատճառների ուսումնասիրություն, վերլուծություն ու դրանց առավել արդյունավետ լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացում.

5) խորհրդի հանձնարարությամբ իրականացնում են միջոցառումներ՝ կոռուպցիայի կանխարգելման հարցերով հասարակության գիտելիքների ընդլայնմանն ու տարածմանը նպաստելու համար՝ մասնակցելով տեղեկատվական և կրթական նյութերի պատրաստման աշխատանքներին, հանդես գալով զանգվածային լրատվության միջոցներով, իրականացնելով այլ գործառույթներ: Այս գործառույթն իրականացնելիս՝ հանձնախումբը համագործակցում է պետական մարմինների, ուսումնական հաստատությունների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների հետ.

6) կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում ապահովում է խորհրդի համագործակցությունը տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, տեղական գործարար ոլորտը ներկայացնող կազմակերպությունների, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում դերակատարում ունեցող մարմինների, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելմանը նպաստող ինստիտուտների հետ.

7) խորհրդի հանձնարարությամբ մշակում է ուղեցույցներ և ներկայացնում խորհրդի հավանությանը, պատասխանատու մարմիններին ցուցաբերում է մեթոդական և այլ աջակցություն.

8) իրականացնում է Խորհրդի կողմից տրված այլ հանձնարարություններ:

18. Հանձնախումբն իր գործունեության վերաբերյալ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում խորհրդին:

19. Փորձագետը՝

1) մասնակցում է հակակոռուպցիոն ռազմավարության և հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերի մշակմանը.

2) մասնակցում է ծրագրերի մոնիթորինգի իրականացման, գնահատման և ծրագրերի իրականացման գործընթացներին.

3) նախապատրաստում է իր մասնագիտացման ոլորտի վերաբերյալ հաշվետվություններ.

4) նախապատրաստում է զեկույցներ՝ իր մասնագիտացման ոլորտային ծրագրերի կատարման վիճակի վերաբերյալ.

5) ներկայացնում է առաջարկություններ՝ իր մասնագիտացման ոլորտում առկա խնդիրները լուծելու վերաբերյալ.

6) ուսումնասիրում և վերլուծում է իր մասնագիտացման ոլորտում կոռուպցիայի դրսևորումները և պատճառները.

7) ներկայացնում է իր մասնագիտացման ոլորտում կոռուպցիայի դրսևորումների և պատճառների առավել արդյունավետ լուծմանն ուղղված առաջարկություններ.

8) մասնակցում է կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ կազմակերպված գիտաժողովներին, աշխատաժողովներին, կլոր սեղաններին, քննարկումներին և այլն.

9) մասնակցում է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում կրթական ծրագրերի, տեղեկատվական նյութերի, ուղեցույցների մշակմանը.

10) իրականացնում է հանձնախմբի համար սահմանված այլ գործառույթներ.

11) իրականացնում է աշխատանքային պայմանագրով սահմանված այլ գործառույթներ:

20. Փորձագետի լիազորությունները դադարում են աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով: Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումն իրականացվում է խորհրդի համաձայնությամբ:

V. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԲԱԺԻՆԸ

21. Խորհրդի և փորձագիտական հանձնախմբի կազմակերպատեխնիկական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծված Հայաստանի Հանրապե-

տության կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժինը (այսուհետ՝ մոնիթորինգի բաժին) իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ապահովում է խորհրդի կազմակերպատեխնիկական աշխատանքների իրականացումը.

2) կազմակերպում է փորձագիտական հանձնախմբի աշխատանքները և ապահովում փորձագետների կապը ոլորտային պետական լիազոր մարմինների պատասխանատուների հետ.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների, ծրագրի, հաշվետվությունների և միջազգային պայմանագրերով կոռուպցիայի դեմ ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցների մոնիթորինգ.

4) հսկողություն է իրականացնում իր գործունեության ոլորտներին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության տվյալ տարվա գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կատարման ընթացքի նկատմամբ և դրա վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնում խորհրդին.

5) իրականացնում է հակակոռուպցիոն ռազմավարությամբ, հակակոռուպցիոն ոլորտային ծրագրերով և այլ իրավական ակտերով հաստատված (սահմանված) հակակոռուպցիոն ծրագրերին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի քննարկմանը կամ կարծիքին ներկայացված իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև առանձին հարցերի հետ կապված մասնագիտական փորձաքննություն, տալիս է համապատասխան ոլորտի զարգացման, գործունեության արդյունավետության բարելավման վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մասին եզրակացություններ.

6) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև տեղական և միջազգային ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպում և իրականացնում է միջոցառումներ, այդ թվում՝ քննարկումներ, կլոր սեղաններ, տեղեկատվական նյութերի և ուղեցույցների տարածում, որոնք կնպաստեն հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ